Հավելված N 2

ՀՀ վարչապետի 2018 թ.

սեպտեմբերի 19 -ի N 1230 - Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը

Անահիտ Ավանեսյան, Առողջապահության նախարար

2. Գործուղման վայրը և ժամկետները

2026 թվականի հուլիսի 1-ից հուլիսի 2-ը, Թուրքիայի Հանրապետություն, Ստամբուլ

3. Հրավիրող կողմը

Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակ

4. Գործուղման նպատակը

Մասնակցություն ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի նախաձեռնությամբ կազմակերպված նախարարական համաժողովին՝ «Երկրաշարժերի առողջապահական ազդեցության նվազեցմանն ուղղված առողջապահական համակարգերի պատրաստվածության և արձագանքման» թեմայով, որի նպատակն էր՝

- քննարկել երկրաշարժերի և այլ բնական աղետների պայմաններում առողջապահական համակարգերի պատրաստվածության և արձագանքման արդյունավետ մեխանիզմները,
- ներկայացնել մասնակից երկրների փորձը առողջապահական համակարգերի դիմակայունության բարձրացման ուղղությամբ,
- խթանել միջազգային և տարածաշրջանային համագործակցությունը՝ արտակարգ իրավիճակներում առողջապահական ծառայությունների անխափան մատուցման ապահովման նպատակով:

Համաժողովը համախմբել էր առողջապահության 12 նախարարների, շուրջ 40 երկրից բարձրաստիճան պաշտոնյաների և ոլորտի փորձագետների՝ երկրաշարժերի պայմաններում առողջապահական համակարգերի պատրաստվածության և արձագանքման կարողությունների զարգացման, միջազգային փորձի փոխանակման և համագործակցության ամրապնդման նպատակով:

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության սեյսմիկ ռիսկերը և բնական աղետների, մասնավորապես՝ երկրաշարժերի՝ առողջապահական համակարգի վրա ունեցող էական ազդեցությունը՝ նման ձևաչափով միջազգային համագործակցությունը կարևոր նշանակություն ունի ազգային կարողությունների ամրապնդման, արտակարգ իրավիճակներին պատրաստվածության բարձրացման, ինչպես նաև միջազգային լավագույն փորձի ուսումնասիրման և կիրառման տեսանկյունից:

5. Քննարկված թեմաները

Համաժողովի ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները՝

- առողջապահական համակարգերի պատրաստվածությունը երկրաշարժերի և այլ բնական աղետների պայմաններում,
- արտակարգ իրավիճակների պայմաններում բուժօգնության և առողջապահական ծառայությունների շարունակական կազմակերպումը
- արտակարգ իրավիճակների կառավարման և ճգնաժամային արձագանքման միջազգային փորձը,
- առողջապահական ենթակառուցվածքների դիմակայունության բարձրացման և ռիսկերի նվազեցման միջոցառումները,
- ԱՀԿ-ի կողմից տրամադրվող տեխնիկական աջակցության և երկրների միջև համագործակցության հնարավորությունները:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

- Նախարար Անահիտ Ավանեսյանը մասնակցել է նախարարական համաժողովի աշխատանքներին և ներկայացրել Հայաստանի փորձը առողջապահական համակարգի պատրաստվածության, արտակարգ իրավիճակների կառավարման և աղետների պայմաններում բժշկական օգնության կազմակերպման ուղղությամբ:
- Համաժողովի շրջանակներում տեղի են ունեցել աշխատանքային հանդիպումներ ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի ղեկավարության և մասնակից երկրների առողջապահության ոլորտի բարձրաստիճան ներկայացուցիչների հետ:
- Քննարկվել են արտակարգ իրավիճակների պատրաստվածության, տեխնիկական համագործակցության, փորձի փոխանակման և կարողությունների զարգացման հնարավորությունները:
- Համաժողովի շրջանակում ՀՀ ԱԳՆ աջակցությամբ կազմակերպվեց երկկողմ հանդիպում Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության առողջապահության նախարարների միջև: Հանդիպմանը երկուստեք նշվեց նմանատիպ համաժողովներին մասնակցության կարևորությունը՝ հաշվի առնելով, որ Հայաստանն ու Թուրքիան արտակարգ իրավիճակների, մասնավորապես՝ երկրաշարժերի հանդեպ հակում ունեցող երկրներ են: Թուրքիայի առողջապահության նախարարը նշեց, որ նման երկկողմ ձևաչափով

հանդիպումը նշանակալի քայլ է և մեծ պատասխանատվություն, քանի որ դրանով հող է նախապատրաստվում երկու երկրների առողջապահության ոլորտների մասնագետների համար հանդիպումներ և փորձի փոխանակումներ կազմակերպելու համար: ՀՀ առողջապահության նախարարը, ընդգծելով նմանատիպ համաժողովների կարևորությունը, հատկանշեց, որ երկու երկրներում արագ արձագանքման թիմերի առկայությունը հնարավորություն է ստեղծում միմյանց հետ հանդիպելու, մասնագիտական մտքեր փոխանակելու և քաղաքի դասերի վերհանմամբ՝ կոնկրետ և փոքրիկ քայլերով առաջ շարժվելու համար:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

- Վերահաստատվել է ԱՀԿ-ի և անդամ պետությունների միջև համագործակցության կարևորությունը առողջապահական համակարգերի դիմակայունության բարձրացման ուղղությամբ:
- Ձեռք են բերվել նախնական պայմանավորվածություններ փորձի փոխանակման և տեխնիկական համագործակցության շարունակական զարգացման վերաբերյալ:

8. Առաջարկություններ, դրանց ընթացք տալու եղանակը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները

- Շարունակել համագործակցությունը ԱՀԿ Եվրոպայի տարածաշրջանային գրասենյակի հետ՝ առողջապահական համակարգի արտակարգ իրավիճակների պատրաստվածության ոլորտում:
- Ուսումնասիրել համաժողովում ներկայացված լավագույն միջազգային փորձը և գնահատել դրա կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում:
- Աջակցել առողջապահական համակարգի դիմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացմանը և միջազգային գործընկերների հետ համագործակցության ընդլայնմանը:

9. Գործուղման ֆինանսավորում

Գործուղման հետ կապված ծախսերը կատարվել են հրավիրող կողմի միջոցների հաշվին:

Ստորագրությունը, ամսաթիվը

2026 թ. հուլիսի 3

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը	ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը	N 577-Ա 30.06.2026թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)	Նախարար **Անահիտ Ավանեսյան**
4. Գործուղման վայրը	Թուրքիայի Հանրապետություն ք. Ստամբուլ
5. Գործուղման ժամկետները	2026թ.հուլիսի 1-2-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝	
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)	Գիշերավարձ, ճանապարհածախս
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*) (*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)	Օրապահիկ

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անահիտ Ավանեսյան*	*Անուն, ազգանուն 2*	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս		0.0
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	0.0		0.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	0		0.0
	Օրերի քանակը	0		
	Ընդամենը (դրամ)	0.0		0.0
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 132		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48561.48		0.0
	Օրերի քանակը	2		
	Ընդամենը (դրամ)	97122.96		97.1
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		97122.96		97.1

Կուրսը 01.07.2026թ.-ի դրությամբ՝1-USD 367.89 ՀՀ դրամ

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

(ստորագրություն) 01.07.2026թ.